



## Ս. ՔՈՂԱՆԶՅԱՆ

### ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԾ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՍՈՒՐՈՒԹՅՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ\*

Այս բոլորի մասին առաջինը վկայել է ԺՀ դարի հեղինակ՝ Պրայը<sup>41</sup>: Մինաս եպիսկոպոսի մասին ցանկանում ենք անել մի քանի անհրաժեշտ ճշտումներ: Վերջերս դոկտ. Զ. Օքերդինսկին հայտնել է այն կարծիքը, ըստ որի իր դեռևս 1669—1672 թվականներին Մինասը Տրանսիլվանիայի Բիստրիցա քաղաքում է բնակվել բազմաթիվ հայ եկեղեցականների և պաշտոնյանների հետ և կամ մինչև 1672 թվականը, ինչպես դարձյալ գրում է նա. «պատմականորեն ստուգէ է, որ այս քաղաքը կրնակեր»<sup>42</sup>, մինչեռո, ինչպես երևում է նույն Մինաս եպիսկոպոսի ձեռքով 1676 թվականին Տրանսիլվանիայի Զորշով քաղաքում նորոգված ձեռագրի կապակցությամբ դրած իր հիշատակարանից, ժողովուրդի կեսը մեկնելուց հետո Տրանսիլվանիա, ինք գեռ չէր հրաժարվել վանքից (նկատի ունի անկասկած Սուլավայի Զամքավանքը—Ս. Փ.): Սակայն Մինաս եպիսկոպոսը հետագայում, միայն 1676 թվականին, կրկնակի կողոպտվելով ասպատակողների կողմից, մերկ և գլխարաց մի մորթի կապած,

\* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից:

<sup>41</sup> Pray G., "Dissertationes historico-criticae..., Vindobonae, 1775, p. 171.

<sup>42</sup> Դոկտ. Զ. Օքերդինսկի, «Եղանակը և անոնց Անդրեաս արքեպիսկոպոսը Յաղովիցի մեջ» (թրգմ. Հ. Հ. Ռոկան), «Հանդէս ամսօրեալ», 1963, էջ 90—91, 102:

հարկադրվում է փախչել Տրանսիլվանիա և միանալ իր ժողովրդին<sup>43</sup>:

Թե ինչքան դժվար է եղել Մինաս եպիսկոպոսին համոզելու գործը, երևում է նաև այն փաստից, որ նրան դավանագործ անելու առթով Մոլդովայի հայերի երրեմնի առաջնորդին կլով էր ուղեկցել ոչ այլ ոք, եթե ոչ կեհաստանի հայ կաթոլիկ թեմի առաջնորդ Վարդան Հովնանյանը<sup>44</sup>: Ցարդ ուսումնասիրողների աշքից վրիպած մի այլ փաստ վկայում է, որ Վրզարյանը Մինասի դավանագործ լինելու տարին՝ 1686 թվականին դարձյալ կլուզում է եղել և Մինաս եպիսկոպոսի համար մի պարտավորագիր է գրի առել<sup>45</sup>: Այստեղից էլ շատ հավանական է կարծել, որ Տրանսիլվանիա գաղթող մոլդովահայերի հոգեոր առաջնորդ Մինաս եպիսկոպոսը փաստորեն բռնի տարվել է կլով 1686 թվականին Վարդան Հովնանյանի և Օքենտ Վրզարյանի միջցով և դավանագործվել լատին հոգևորականների ներկայությամբ: Մինասը նշված դեպքից հետո հազիվ մի քանի ամսիս պետք է ապրած լինի, քանի որ, ինչպես նշում է Ստեփանոս Ռոշքան, Մոլդովայի հայոց եպիսկոպոսը նույն 1686 թվակա-

<sup>43</sup> Հ. Պ. Աղիշտան, «Կամենից», էջ 196—197:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 199; Հ. Վ. Էստկարյանը և նշում վ. որ Մինասը Օքենտ հայ կլով է գնացել (տե՛ս նրա նշված աղիշտառթյանը, էջ 384):

նին վախճանվում է<sup>46</sup>: Նա թաղվում է Թիստրիցայի ոռումինական գերեզմանոցում<sup>47</sup> և ոչ թե կլովում, ինչպես գրում է դոկտ. Զ. Օբերդինսկին<sup>48</sup>:

Մինասի դավանափոխությունը մեծագույն հաջողություններից մեկն է Համարվել և մեծ հույսեր են կապել նրա հետ Մոլովայում մնացող անհովիլ հայկական թեմը ևս միացնելու համար: Այդ է վկայում այն, որ Մինասի դավանափոխության մասին հատուկ արձանագրել է Վարդան Հովհաննյանը Եղողիկայի հայ կաթոլիկներին գրած իր ընդարձակ «Թուղթ քաջալերական»-ում: Ահա Վ. Հովհաննյանի գրած տողերը.

«Մինաս վարդապետ է վկոլկացի, Զիլիֆտար օղլու մականուաննեցեալ, եպիսկոպոս Պուղտանու, եկն ընդ իս ի Էկոպոլիս, ի դառնալ իմում, և առաջի գարտինալին Փալավիշինի Էկադի Փափին, որ յայնժամ էր ի Էկոպոլիս, արար զգաւանութիւն հասատոյ կաթողիկէ յամի Տեառն ՌՈԶԶ-ին (1686); եւ ի թվ. Հայոց ՌՃԼԵ-ին (1686)»<sup>49</sup>:

Ստեփանոս Ռոշքան իր ժամանակագրության մեջ համարյա սրբացնելով Մինասին, գրում է, սակայն, որ ինք 1680 թվականին նրանից չորս աստիճան է ստացել և ականատես է եղել նրա ջերմեռանողությանը<sup>50</sup>: Այս թվականը եթե գրշության սիսալ չէ (1680-ի տեղ կարող էր լինել 1686 թ.), պետք է կարծել, որ Ռոշքան հավանաբար Տրանսիլվանիա վաղ գաղթողներից մեկի որդին էր և կամ Մոլովայից լեհաստան և ապա Տրանսիլվանիա ապաստանող մի անձնավորություն: Որ Ռոշքան ծնվել էր Կամենիցում, այդ մեջ հաւորդում է լեհահայ պատմիչ Բարոնը<sup>51</sup>, սակայն, որ նա կապ ուներ Մոլովայի հայերի հետ, այդ վկայում է իր Ռոշքան տումանունը (ռոշքա ոռումիներեն նշանակում է «կարմիր»), որը ոռումինական ծագում ունի<sup>52</sup>, և այն, որ նա 1729 թվականին, երբ այցելել է Տրանսիլվանիայի հայ կենտրոնները,

<sup>46</sup> «Կամենից», էջ 144:

<sup>47</sup> Գ. Գովրիկյան, «Դրանսիլվանիո Հայոց մետրապոլիս», էջ 119—120:

<sup>48</sup> Դոկտ. Զ. Օբերդինսկի, նշված աշխատությունը էջ 91:

<sup>49</sup> «Կամենից», էջ 127:—Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 9748, էջ 60:

<sup>50</sup> «Կամենից», էջ 144:

<sup>51</sup> Sadok Baracz, „Rys Dziejow Ormianskich”, Tarnopol, 1869, p. 193.

<sup>52</sup> Szongott Kristof, „A Magyarhoni örmény családok genealogiaja”, Szamosújvart, 1898, p. 152. Ռումինիերեն Ռոշքա (Roșcă) նշանակում է կարմիր ծագ (տե՛ս Lazăr Șăineanu, „Dicționar universal al limbilor române”, ed. VI, 1929. p. 553).

գրում է, որ եղել է այնտեղ նաև իր ազգականների տեսության<sup>53</sup>: Հավանաբար Ռոշքան հետագայում լեհաստանում հարեց կաթոլիկության, քանի որ Մինասը անվիճելի է, որ 1680 թվականին կաթոլիկության հարած չեր կարող լինել, որպեսզի Ռոշքային հիշյալ հոգևոր շորս աստիճանները տար: Հայտնի է, որ Վրացարյանը իր կաթոլիկական քարոզությունը Տրանսիլվանիայում սկսել է 1684 թվականին, երբ նշեցինք, որ նրան ամենից ավելի ընդդիմացողներից մեկն է եղել Մինաս եպիսկոպոսը: Մենք նույնպես կարծում ենք, որ 1687 թվականին Տրանսիլվանիայի ջուրջով քաղաքում հիշվող կազմարար Մտեփանոս պահիր Կամենիցացին<sup>54</sup> նույն Ռոշքան պետք է լինի: Որ նա կազմարարությամբ ևս զրադիվել է, այդ երեսում է նրանից, որ նույն Ռոշքան 1707 թվականին կազմել է մի այլ ձեռագիր Կամենիցում<sup>55</sup>:

Մինաս եպիսկոպոս Զիլիֆտար օղլուի կապացությամբ անհրաժեշտ է կատարել ևս մեկ ճշտում: Պատմագրության մեջ տիրել է այն կարծիքը, ըստ որի Տրանսիլվանիա գաղթող Մինաս եպիսկոպոսը և 1649 թվականին Սուչավայում գրված<sup>56</sup> և այժմ Բուխարեստում պահպող ձեռագիր մի Ավետարանում հիշվող Մինասը, որը դարձյալ Մոլովայի հայոց առաջնորդն է հանդիսացել, իբր նույն անձնավորությունն է եղել<sup>57</sup>: Ժամանակի փաստերի ուշադիր քննարկումը, սակայն, մեզ բերում է այն եղբակացության, որ 1676 թվականին Մոլովայից Տրանսիլվանիա գաղթող Մոլովայի հայոց թեմի առաջնորդ Մինաս Զիլիֆտար օղլու կոչված եպիսկոպոսի եպիսկոպոսը ոչ մի կապ չուներ 1640-ական թվականներին դարձրալ Մոլովայի հայոց թեմի առաջնորդ Մինասի հետ: Տրանսիլվանիա գաղթող Մինասը հայոց առաջնորդ կարող էր դարձած լինել ոչ շուտ քան 1669 թվականը, քանի որ գեռ նույն թվականին Պիտուն իբրև Մոլովայի հայոց

<sup>53</sup> Գ. Գովրիկյան, նշված աշխատությունը, էջ 52, 74—75 և այլն:

<sup>54</sup> Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 9485:

<sup>55</sup> Հ. Հ. Տաշյան, «Յուցակ ձեռագրաց», էջ 692:

<sup>56</sup> Frédéric Macler, "Rapport..., en Roumanie...", p. 52.

<sup>57</sup> Chr. Lukacsi, „Historia...”, p. 66:—Դ. Տան, նշված աշխատությունը, էջ 33—Հ. Հ. Տաշյան, «Յուցակ ձեռագրաց», էջ 1116:—Ա. Գամինյան, «Հայոց եկեղեցու պատմություն», թ մասն, Նոր Նախիջևան, 1909, էջ 125 և 128:—N. Iorga, „Armenii și Români...” p. 69 և այլն: Վերջերս, անկախ մեզանից, այս հարցում հիշտ եպիսկոպոսի հանգել դոկտ. Զ. Օբերդինսկին (տե՛ս նշված աշխատությունը, էջ 90):

թեմի առաջնորդ հիշատակում է Խսահակ եպիսկոպոսին<sup>55</sup>, իսկ նախորդ Մինասը դեռ սրանից ավելի քան տասը տարի առաջ զո՞հ գնացել Սուչավայում տեղի ունեցող ասպատակությունների ժամանակի<sup>56</sup>:

Պետք է նշել սակայն, որ Մինասի և Հայոց մի մասի կաթոլիկության հարելոց հետո իսկ, դեռ Տրանսիլվանիայի հայերի մի կարևոր մասը, իր հնագույն դավանությունը շարունակեց պահպանել: Մինասի մահից հետո Օքսենտը կվովի արքեպիսկոպոս Վարդան Հովհաննանի կողմից նշանակվեց եպիսկոպոսական փոխանորդ և շարունակեց մնացյալ հայերին և կաթոլիկացներու գործը: Ըստ Գ. Գովորիկյանի, այդ ժամանակ «գարձի գործը՝ դյուրացավ», օր քան զօր հառաջացավ ու ավելի տարածություն ստացավ: Եկեղեցականաց այն մասն ալ, որ մինչև հիմակ ուղղափառ հավատքին սկզբունքներն ընդունելու կընդդիմանար, հայտնեց, թե՝ Հովհան գահում հետ կմիանա»<sup>60</sup>: Մրանից հետո է, որ «Հավատացելոց ժողովը Մնտրու գլխավոր քահանան ութ ուրիշ քահանայի հետ լեմպերկ խրկեց, որոնք Վարդան Հովհաննանի առջն հանում բոլոր Դրանսիլվանիո Հայոց, Ս. Հոր Հավատարմություն խոստացան: Խնդրեցին միանգամայն իննովկենտիոս ԺԱ պապեն, որ իրենց վրա եպիսկոպոս դնե զՎրզարյան»<sup>61</sup>: 1689 թվականին պապը մահանալով միայն, նրա հաջորդ Աղեքսանդր Ը պապը Օգուստին 1690 թվականի հոկտեմբերի Յ-ին հայոց առաքելական փոխանորդ և երեսփոխան անվանեց: Պապը իր գործիքան մեջ նշում է, որ կամենալով «օգնել» Մոլովայից Տրանսիլվանիա գաղթող հայերին, Օքսենտին պաշտոնով ուղարկում է այնտեղ մի շարք լիազորություններով. «... զի ընդունիցին զեկ ամենայն պատուեվ, և մեծարանօք, զոր կարգեցր ի գործ առաքելական երեսփոխանութեան, գործակալութեան, և վերիլութեան,

55 «Բռնի միութիւն...», էջ 10—11:

56 Գեղալի թանգարանում այժմ պահպան մի ձեռագրում, № 2 (18), գրված 1659 թվականին Սուչավայում, Ավետիք սարկավագի կողմից, գրիշը հիշատականում գրում է. «Եմ որդի Մինաս եպիսկոպոսի Սէլովի, որ զինքն զազախնին սպանեցին: Գովրիկանի մոտ այս պարբերությունը սիսալ է բերված. «Զեռամբ... Աւետիք սարկավագի և իմ որդի Մինաս եպիսկոպոսի Սէլովի, որ զինքն զազախնին սպանեցին» («Դրանսիլվանիո հայոց մետրապոլիսը», էջ 336): Այստեղից էլ դուրս է գալիս, որ իր Ավետիքի որդին է Մինասը, այնին հակառակն է եղեւ «Որդի» արտեղ պետք է հասկանալ անշուշտ «Շողմոր որդի» իմաստով:

60 Գ. Գովորիկյան, Խշած աշխատությունը, էջ 120—121:

61 Նույն տեղում, էջ 121:

այսու մերովս կոնդակաւ աւանդեցեալ: Եւ ձանաշխցեն զքեզ ինքեան հովիւ և առաջնորդ...»: Կոնդակի վերջում պապը սահմանմ է, որ բոլորը Օքսենտին հնազանդ և ձեռնուու լինեն: Իսկ իր հակառակորդներին և անհնազանդ եղող մարդկանց նկատմամբ սահմանելի վճիռները և պատիմները պապը ևս պատրաստ է նույնպես հաստատելու. «Պվիճիռս, զպատիժիս, զորս դու ըստ իրաւանց և կանոնաց սրբոց սահմանիցես կամ հրատարակիցես, ընդդիմ հակառակաց քոց. և արանց անհնազանդից, մեք ևս զայնուիկ հաստատելոց եմք...»<sup>62</sup>:

Վրզարյանի կյանքի և գործունեության սկզբնական շրջանի վերաբերյալ շատ ավելի ուշագրավ են հայերի կողմից կեռպուդ կայսրին գրված այն աղերսագրում եղող տողերը, որոնք ինքնակենսագրական արժեք ունեն, քանի որ աղերսագրու անպայման պետք է որ գրված լինի նույն ինքն Վրզարյանի ձեռքով: Այդ հաստատվում է նույն գրության մեջ նույն Վրզարյանի մասին գրված նվաստացուցիչ տողերովը<sup>63</sup>, որոնք միայն թույլ կարող էր տալ աղերսագրի հեղինակ հանդիսացող Վրզարյանը: Աղերսագրից մեջ հնք բերում Վրզարյանի կյանքին վերաբերող հետեւյալ պարբերությունը. «1676-ին, Մոլդավիայի Պոթուշան (իմա՝ Բոտոշան) հասարակության գալաքուրին, կուսիկ Վերդիին գոյ վաճառականին որդին, Ավքսենտիոս, որ ավելի մեծ սեր ուներ գիտությանց քան ապրանքներու, և որ մայրենի լեզվին մեջ ինքնի կատարելապես կրթելեն ետև, լատին գիտությունները հատկացնելու նվաստակավ սաստիկ փութով սորվելու սկսավ, ծնողաց տունը թողլով՝ կեմպերկ քահանայապետական վարժարանը մտավ: Բայց հայրն այս որոշման ամեններ զիշանել չուղելով՝ զինքը ծուրճով բերել տվավ. ուր որ—որովհետև ինքն այ դեռ հերձվածող էր (ընդգծումը մերն է—Ս. Փ.)—հայ մոլորությանցը վրա իմաստությամբ լուց: Որպեսզի հորն դիտավորությունը—որ զինք ամեն կերպով ճուրճովցի օրիորդի մը հետ ամուսնացնել կուղեր—պարապի հանեն, ծնողացը տնեն նորեն լեհաստան փախավ, և ասկե Մարթիլլ լեհական արքունյաց քով գտնվող քահանայապետական նվիրակին խորհուրդովը Հոռմ գնաց: Ուր հերձվածեն հանդիսական կերպով հրա-

62 Նույն տեղում, էջ 122—123:

63 Աղերսագրում գտնում ենք հետեւյալ տողերը. «Այս միաւթյունը, չէ թի պարզապես Ավքսենտիոս Վրզարյանի—միայն անկատար գործիքին և անօգոս ծառային (ընդգծումը մերն է—Ս. Փ.)—հապա ամենակարողին գործը...»: (Տե՛ս Գ. Գովորիկյան, «Հայք յեղիսարեթուպութիւն», թ, էջ 157):

ժարելին ետև՝ տարածման հավատող Ուրբանյան վարժոցին աշակերտեցավ; Քանի մը տարի Հոն մնալով՝ երբ սրբազն գիտությունները կատարելապես սորվեցավ, առաջնորդները՝ զերիտասարդ քահանան իրեն առաքելական քարոզիչ՝ իր ազգականներն ու բոլոր հայերը դարձնելու համար Դրանսիլվանիա խրկեցին, հանձնելով իրեն որ ամեն ջանք ընել և հայերը ռոպե մը առաջ Հռոմեական Ս. Եկեղեցվոյն ենտ միացնե»<sup>64</sup> (ընդգծումը մերն է—Ս. Գ.):

Այսպիսով Ուրբանյան քարոզական վարժարանի ղեկավարությունը, հանձին Վրզարյանի, գտել էր քարոզական գործի լավագույն թեկնածուին և պետք է ասել, որ ղեկավարությունը շսխալից այդ ընտրության մեջ: Ուշագրավն այն է, որ, ինչպես ասված է նույն աղեքոսագրում, Վրզարյանը 1684—1690 թվականներին ավարտած էր համարում Տրանսիլվանիայի հայերին կաթոլիկացնելու գործը: Սակայն հետագայի գեպեքնը ցուց տվեցին, որ իրականում այդ միացումը առերես է եղել և հիշյալ թվականից հետո, գեղեցիկ են գար շարունակ, բռնի միջոցների օգնությամբ, պայքար է մղվել հայերին վերջնականապես կաթոլիկացնելու համար:

### 3. ՏՈՂԻՌՎԱՅԻ ՀԱՅԵՐԻՆ ԵՎՍ ԴԱՎԱՆԱՓՈԽ ԱՆԵԼՈՒ ՓՈՐՉԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԶԱԽՈՂՈՒՄԸ

1672—1684 թվականներին Մոլդովայից շուրջ 10 000 հայեր, և կամ, ըստ ոմանց, 3000 հայ ընտանիք էին գաղթել Տրանսիլվանիա: Սակայն և այնպես փաստերը անվիճելիորեն վկայում են, որ հիշյալ գաղթերից հետո Մոլդովայի հայ գաղութը շքաքարվեց, Զնայած այն բանին, որ Ժէ դարի վերջին տասնամյակներում շատ ծանր էր դրությունը Մոլդովայում, քանի որ անվերջ պատերազմները, սովոր ու համաճարակը, կողոպուտը և իրար հաջորդող պայքարը Մոլդովայի գահի շուրջ, ծայր աստիճան դժնդակ վիճակ էին ստեղծել երկրում, այնուամենայնիվ հայերը շուտով վերսկում են կազմակերպել իրենց հնագույն գաղթավայրերը: Հայերի վերստին հավաքմանը նպաստում էին նաև Մոլդովայի տվյալ շրջանի մի շարք իշխանների կողմից հայերին տրված արտօնությունները: Մոլդովայի քաղաքների գարգացմանը գեռես ԺԴ դարից նպաստող, հատկապես առևտորին ու արհեստագործությանը զարկ տվող հայերի գաղթը չէր կարող իր բացասական աղդեցությունը չունենալ երկրի կյանքում: Անշուշտ այդ է պատճառը, որ

<sup>64</sup> Գ. Գովրիկյան, նշված աշխատությունը, էջ 155—156:

1677 թվականի ապրիլի 21-ին իր հրովարտակով Մոլդովայի Անտոնիի Ռուսետ (1675—1678) իշխանը Մոլդավայի հայոց եպիսկոպոսարանին առանձնաշնորհումներ է տալիս և նշում, որ անհրաժեշտ է սրանից հետո կանչել շատ հայերի թուրքական երկրից կամ Լեհաստանից և նրանց ազատել հարկերից<sup>65</sup>: «Թուրքական երկիր» ասելով, իշխանը, անշուշտ, բացի բուն թուրքիայից, նկատի ուներ նաև Տրանսիլվանիան՝ ապաստանած հայերով, քանի որ այդ երկիրը տվյալ թվականին դեռևս գտնվում էր թուրքական արիապետության տակ: Իշխանը, նույն ժամանակ, ծանրագույն պատժի սպառնալիքով, կարգադրում էր բարձրագույն պաշտոնատարներին չնեղել հայերին: Հայերին նույնպիսի առանձնաշնորհումներ են տալիս նաև հետագա իշխանները: Մոլդովայի Անտիոք Կանտեմիր իշխանը, 1705 թվականի հունիսի 8-ին, բոլոր տեսակի հարկերից ազատում է Յաշի հայոց երկու եկեղեցիների հոգևոր պաշտոնյաններին<sup>66</sup>: Նույն առանձնաշնորհմը հաստատում են նաև հաջորդ իշխաններից Միհայ Ռակովիցը (1707 թ. նոյեմբերի 18-ի հրամանով)<sup>67</sup>, Ն. Ալեքսանդր Մավրոկորտադը (1710 թ. մարտի 15)<sup>68</sup>, Դիմիտրի Կանտեմիրը (1711 թ. գեկտեմբերի 18)<sup>69</sup>, Գրիգոր Գհիկան (1727 թ. օգոստոսի 17)<sup>70</sup> և ուրիշները: Սակայն մինչև Ժէ դարի վերջը խաղաղությունը չէր հաստատված Մոլդովայում: Պետք է նշել, որ նույն ժամանակաշրջանում Վալաքիայում ևս նպաստավոր չէին պայմանները: Հավանաբար այս պատճանների և Տրանսիլվանիա գնալու մտադրության հետևանքով է, որ տվյալ ժամանակաշրջանի մոլդովական փաստաթղթերում մեզ հանդիպում են նաև հայերի կողմից մի շարք հողամասերի և տների վաճառքի գործարքներ<sup>71</sup>:

Սակայն, հակառակ տիրող աննպաստ պայմանների, Մոլդովայում գեռես հայեր էին ապրում: Այդ շրջանից մեզ են հասել մի շարք հայերեն ձեռագրեր, որոնք արտագրվել են հիշյալ վայրում: Այսպես, հայերեն ձեռագրեր են գրվել 1684 թվականին իրայիիւմ (Բրյուլա)<sup>72</sup>, 1697 թվականին Քիլիում

<sup>65</sup> Teodor Bălan, „Documente Bucovinene“, vol. 4, p. 237.

<sup>66</sup> Ion Neculce, Iași, 1923, p. 118.

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 120:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 176—177:

<sup>72</sup> Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 6582:

(Քիլիա)<sup>73</sup>, 1698 թվականին Յաշում<sup>74</sup>, 1707. թվականին Սուլավալում<sup>75</sup> և այն: Մի շարք փաստեր կա վկայում են Մոլովայի երբեմնի հայաշատ կենտրոններում հայերի թվի աճի մասին: Չնայած այն բանին, որ 1675 և 1686 թվականներին լեզերը, մոտք գործելով Սուլավալ, քաղաքի ողջ բնակչությունը, այդ թվում և հայերը, փախել էին և այնտեղ միայն մեկ մարդ էր մնացել<sup>76</sup>, 1693 թվականին նույն Սուլավայում հայերի թիվը հասել էր 3000-ի, 20 000 մոլովացիների դժմաց<sup>77</sup>: Յաշում ևս բավական ստվարացած պիտի լիներ հայերի թիվը, քանի որ 1727 թվականի օգոստոսի 17-ին Գէկիա իշխանի կողմից հայերին տրված առանձնաշնորհումների հրովարտակում միայն Յաշի երկու եկեղեցիներում հիշատակվում են 5 քահանան և 1 սարկավագ<sup>78</sup>:

Վրզարյանը անշուշտ անտարբեր չէր կարող մնալ իր ծննդավայր Բոտոշանում և մոլովական մյուս քաղաքներում հետզետե վերակաղմնող հայ գաղթավայրերի նկատմամբ:

Համենայն դեպս, ճիշտ պետք է համարել, որ Վրզարյանը 1690 թվականը նկատել է Տրանսիլվանիայում ապաստանած հայերի կաթոլիկացման գործի ավարտման թվական, քանի որ նույն 1690 թվականին տեսնում ենք, որ նա ռմտահոգվում է՝ բուն Մոլովայում ապրող հայերի վիճակով և Զուրչովում Հորինում է երեք մոլովական քաղաքների հայ կարիքների (երիտասարդների) ընկերության մի կանոնադրություն:

Յորգան գրում է, որ Օքսենտը և իր ավագերեցը (իմա՝ Մնդրովը), որոնք նաև Սեկուլարիստի երկրում Զուրչովում և ապա Բիստրիցյալում ապաստան էին գտել, իրենց կապերը Մոլովայի հետ չէին խզել: Գաղթողները իրենց հետ տանում էին բոլոր այն սովորությունները, որոնցով անց էին կացրել Յարից ավելի: Այդպես կարելի է մեկնարանել, որ այնտեղ 1690 թվականին Վրզարեսկովի համաձայնությամբ խմբագրվել է մի կանոնադրություն կարիքների եղբայրության համար<sup>79</sup>: Յորգանի ասածը վերաբերում է

<sup>73</sup> Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 9800:

<sup>74</sup> Խորայց եպիսկոպոս Պոլարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», երկրորդ հատոր, Երևան, 1953, էջ 147:

<sup>75</sup> Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 5817:

<sup>76</sup> Դեմ. Տան, «Արևելեան հայք», էջ 36:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>78</sup> «Ion Neculce», p. 118-120.

<sup>79</sup> Ն. Յորգան աշխատությունը, էջ 69:

1690 թվականին Զուրչով քաղաքում նույն ինքն Վրզարյանի կողմից խմբագրված կանոնադրությանը, նրա ծննդավայր Բոտոշանի, ինչպես նաև Յաշի և Ռումանի կարիքների եղբայրության համար: Նա Մոլովավայի հայերից իր կապը խսկած որ շեր խզում, քանի որ հետապնդում էր նաև այդ երկրում ապրող հայերին ևս կաթոլիկացների: Կարիքների եղբայրությունները Մոլովավայի հայերի մոտ գոյություն էին ունեցել դեռևս Ժ դարի սկզբից: Սակայն տեղի հայ գաղթավայրների կյանքը մասամբ խաթարվել էր քաղաքական մի շարք դեպքերի հետևեանքով, ոստի այնտեղ ապրող հայերը անհրաժեշտ էին զգում վերակազմել իրենց եղբայրությունները, և քանի որ Մոլովավայի հայոց թեմը այդ ժամանակ հոգեմոր առաջնորդ չըներ, ահա այդ առիթը իր ձեռքից բաց չի թողնում Վրզարյանը: Ուշագրավ է, որ այդ կանոնադրության սկզբում Վրզարյանը հիշատակել է նաև Ալեքսանդր պատիկին և ապա Եղիսաբեր հայոց կաթողիկոսին: Այստեղից էլ, մեր կարծիքով, դժվար չէ կուահել, որ Վրզարյանը ցանկանում էր սիրաշահել Մոլովայում մնացած և Տրանսիլվանիա չգաղթած հայերին և շուտով նրանց ևս միացնել Հունգարիան եկեղեցու հետ: Վրզարյանը հիշյալ կանոնադրության սկզբում իրեն հիշում է իրեւ առաջնորդի փոխանորդ Մոլովավայի հայոց վանքին: Նա իրեն միայն որպես առաջնորդական փոխանորդ է հիշել այն պատճառով, որ կովկի արքեպիսկոպոսը, ինչպես տեսանք, իրեն համարում էր նաև Մոլովավայի և Վալարիայի հայերի առաջնորդի իրականում թե՛ Վրզարյանի և թե՛ Հունգարիանի և ապա նրա հաջորդների առաջնորդական այդ կողմեները եղել են միայն անվանական և երբեք նրանց չի հաջողվել այդ բանը իրականացնել կանոնում: Վրզարյանը նույն կանոնադրության սկզբում հիշատակում է նաև Եղիսաբերությունների հիշյալ կանոնադրությունը, որի բնագիրը մենք տեսանք 1948 թվականին Բոտոշանում առաջարկել է գրադարանի համայնքի գրասենյակում, երկար տարիներ դրվել է կիրառության մեջ, քանի որ իր բովանդակությամբ կազմված է եղել տեղի հայերի հնագույն սովորությունների համապատասխան, սակայն կանոնադրությունը կազմելու առիթով, Մոլովավայի հայերին սիրաշահելու և կաթոլիկության մղելու Վրզարյանի Գույսերը իրենց չեն արդարացրել: Այսպիսով, հիշյալ կանոնադրությունը կաթոլիկական քարոզության համար ոչ մի օգուտ չի բերել:

Այստեղ բերում ենք մի հատված կտրիձների վերոհիշյալ կանոնադրությունից.

«Նախ ի փառ ամենայն Սրբոց Երրորդութեան Հօր և Որդոյ և Ոգոյն Սրբոյ, երկրորդ ի յիշատակ ապագայից մերազնեայց և երրորդ վասն կառավարութեան եղբայրակցութեան երիտասարդաց, այսինքն կտրճվորացն Պօշանու, եաշու և Ուռմանու, ի ժամանակս ընդհանրոյ Հայրապետին և սրբազն փափին Տեառն Աղեքսանդրու և Հայոց կաթողիկոսին Տեառն Եղիազարու և փոխանորդութեան առաջնորդին տեղույն Սէլզովու վանիցն Տեառն Օգուստիոսի մակը անուանեալ Վրձրէսպով վարդապետի և յաւագերեցութեան Տեառն Եղիայի մակը անուանեալ Մնտրովին...»:

Նույն կանոնադրության վերջում գրված է. «... և մեր ևս աստուածային օրհնութեամբ և նախախնամութեամբն օրհնեմք և հաստատեմք զպրաստաւաս այս յանուն Հօր և Որդոյ և Ոգոյն Սրբոյ և խոստանամք սիրելի լինիլ, սիրեցելեաց նորա և թշնամի թշնամեաց նորայ: Ուստի և ի հաստատութիւն յիշատակարանիս գրի ևս Օգս սենատիոն վարդապետ ] Վ[ բձբեսպով ] զիմ մոհրն և զիմ ձեռագիրն ի վերայ սորա, թվ. ՌԾԷՒԲ (1690) սեպտեմբեր ժԲ (12), ի ձուրճովու Մնմիգուշն»<sup>80</sup>:

Այս անհաջողությունից հետո, հետագա տասնամյակներին Տրանսիլվանիայի հայերի մոտ կաթոլիկական քարոզչության դեմ մզգող պայքարը շարունակվում էր, այդ պատճառով էլ Վրդարյանը շէր կարող, դեռևս գաղթող հայերին կաթոլիկ չգործարած, զբաղվել նաև բուն Մոլդովայի հայերի գորած-ի հարցով: Լովովի հայ կաթոլիկ թեմը պարզ տեսներով, որ բացի Վրդարյանից, այդ շրջանում Տրանսիլվանիայում նույնիսկ կաթոլիկության հարած հոգևորականները այնքան էլ վստահելի չեն կարող համարվել, ուստի նկատի ունենալով նույն Վրդարյանի դժվարին կացությունը, Մոլդովայում կաթոլիկական քարոզության գործը կրկին իր ձեռքն է վերցնում:

**1672—1684** թվականներին, Մոլդովայի հայերի գաղթի ժաման օրերին, տեսնում ենք, որ Վարդան Հովհաննար իր օգնական Աստվածատուր եպիսկոպոս Ներսեսովիշին է ուղարկում Մոլդովա: Նա լեռպոլդ կայսրից և Ավգոստոս թագավորից հանձնարարագրեր

<sup>80</sup> Ս. Քոլանջյան, «Ցուցակ Ռումինիայի գանազան քաղաքներում ցրված հայերին ձեռագրերից (անտիպ): — «Արարատ»-ի 1889 թ., էջ 398—407, տպագրված Կանոնադրության մեջ, բացակայում է Աղեքսանդր պապի անունը: Կան նաև այլ տիպի աղավազումներ և թիրացումներ:

առնելով, ներկայացավ Դուկա իշխանին, որպեսզի հայ եպիսկոպոսությունը, որ թափորդ է մնացել, կովկի թեմին միացնի<sup>81</sup>: Ամենայն հավանականությամբ Ներսեսովիշը Մոլդովա գնացած պիտի լինի Դուկայի երկրորդ իշխանության ժամանակ (1678—1683): Մի քիչ ավելի ուշ, նույն Ներսեսովիշը կրկին Մոլդովա է գալիս և տեղի հայերին հռոմեադապան գարձնելու նպատակով ներկայանում է երկրի իշխան Անտիոհ Կանդեմիրին (1695—1700, 1705—1707)<sup>82</sup>: Ինչպես նշում է Դանը, նույն Ներսեսյանը, որ եպիսկոպոս էր «Տրայանուպոլսոյ ի կողմանս անհաւատից», Մոլդովայի իշխանի մոտ ներկայացել էր լեռպոլդ Ա կայսրից, կեհաստանի Օգոստոսության թագավորից և Առաքելական Աթոռից, այսինքն պապից, «որ ամենայն կերպով կշանար Մոլդովայի հայերն ի միություն բերելու, հատուկ թղթեր բերելով, Ներսեսյանի դիտավորությունն էր իշխանից հրաման ստանալ, որ Մոլդովայի արևելյան հայ եկեղեցիները կլովի կաթոլիկ հայ արքեպիսկոպոսի իրավասության ենթարկվեն: Բայց նրա փորձերը անհաջողությամբ վերջացան<sup>83</sup>: Պարզ է, որ բացի Մոլդովայի հայերի կոփված ընդդիմությունից, երկրի իշխանը ևս, իրեւ հոնադապան, երբեք չէր կարող ցանկալ, որ իր երկրում ապրող մի հնամենի ու վստահելի աղգաբանակլություն կաթոլիկ դառնար, այդ նշանակում էր նաև հեղինակության անկում հանդեպ կաթոլիկական քարոզչության մարմացով տարված ավստրիական և լեհական պետությունների և պապի: Ինչպես երեսում է հիշալ Անտիոհ Կանտեմիրի իշխանի եղբայր, հայտնի գիտնական և դարձալ Մոլդովայի իշխան Դիմիտրիի Կանտեմիր (1693, 1710—1711) իշխանի մի աշխատությունից, Մոլդովայի հայերը այս շրջանին ունենալով տեղական ուղղափառ եկեղեցիների մեծության և գեղեցկության շղիջող տաճարներ և վայելում էին իրենց դավանությունը՝ գործադրելու աղատությունը<sup>84</sup>:

Լեհահայերի կողմից սրբագրված և կամ բոլորովին լատիներենից թարգմանված եկեղեցական գրքերը, որոնք, ինչպես տեսնում, մեծ տարածում էին գտնել Տրանսիլվանիայի հայ կաթոլիկների մոտ, մուտք էին գործում նաև Մոլդովայի հայկական եկեղեցիներում:

<sup>81</sup> Զ. Օքերդինսկի, նշանակ աշխատությունը, «Հանձնամուրեալ», 1962, էջ 275:

<sup>82</sup> Վ. Վ. Հատկարյան, «Եկեղեցական պատմություն», էջ 383:

<sup>83</sup> Դմ. Տան, նշանակ աշխատությունը, էջ 39:

<sup>84</sup> Dimitrie Cantemir, „Descrierea Moldovei, traducere de pe originalul latinesc de G. Pascu“, București, 1936, p. 205.

սակայն բացահայտվելով՝ այդ գրքերի ինքնությունը՝ ոչնչացվում էին; Ստեփանոս Ռոշքանը ցասումով նկարագրում է, թե ի՞նչպես Սուշավայի եկեղեցիներից մեկում 1734 թվականին Կիրակոս պատու մի վարդապետ, նման մի Խորհրդատետոր, պատու-պատառ անելով, այսում է և նրա կողերով քահանայի գլուխ ժեծում ժողովրդի առաջ: Այս թե բառացի ինչ է գոյել Ռոշքան իր 1736 թվականի մարտի 10-ի նամակում՝ ուղղված Արքահամ Արծիվան հայ կաթոլիկների կաթողիկոսին. «Բայց լոել ոչ կարեմ զանօրէն արարն Կիրակոս վարդապետին, որ երկու ամօք յառաջ ի Եւշով քաղաքին ի մէջ եկեղեցւոյն առաջի ժողովրդեան զիսրհրդատետորն մի ծիւ ծիւ արարեալ այրեաց և կողիւքն զգուխ քահանայի միոյ ծնծենց: Գարցիւ է ինձ գայսպիսեաց գրելն, բայց գանգատքն ոչ տան թուլ»<sup>85</sup>; Ինչպես նշում է Գաթրճյանը, «այն Խորհրդատետրն անշուշտ շեհահայոց փոփլայլ օրինակներին էլու»<sup>86</sup>:

Ուշագրավ է, որ հետագայում ևս Մոլդովայի հայոց մոտ կաթոլիկական քարոզությունը չի ընդհատում իր գործունեությունը, այլ ընդհակառակը այն կրում է սիստեմատիկ բնութիւ: Զենք կարծում, որ հետաքրքրությունից զուրկ լինեն հետեւալ մեջքերումները՝ Մոլդովայի հայերի մոտ կատարվող կաթոլիկական քարոզուական գործունեության մասին:

Լվովի արքեպիսկոպոս Հովհաննես Տորիա Ավկուստինովիլը (1716—1751) ևս շարունակում է օգտագործել Նիկոլական հին անվանական տիտղոսը, իբրև ռեպիսկոպոս Մոլդովիոյ նոյն ազգին Հայոց, ըստ 1728 թվականի մի հիշատակագրության<sup>87</sup>; Այս տիտղոսը կրկին օգտագործվում էր, հավանաբար այն պատճառով, որ այս շրջանին, բացի այցելու նվիրակներից, Մոլդովայի հայոց թեմը փաստորն հիմնական առաջնորդ չուներ այլև, այնպես, ինչպես որ ունեցել էր մինչև հայերի մի մասի Տրանսիլվանիա գաղթելը: Իհարկե, այս փորձը ևս ոչ մի արդյունք չտվեց:

1757 թվականին, Հովոմում, Ուրբանյան դպրոցում ուսած Հովհաննես Հակոբյան տրանսիլվանիացի քահանան Հովոմի Պրոպագանդայի կողմից առաքելությամբ Մոլդովա ուղարկվեց: Մակայն, ըստ երևութիւն, նա ուժեղ հակահարված էր ստացել տեղի հայերից, քանի որ Հայությանը հետեւալ ձեռվ է նկարագրում նրա վախճանը. «Հմիաց-

<sup>85</sup> «Կամենից», էջ 146 և Հ. Վ. Գարենյան, «Սրբազն պատարագամատուցք հայոց», էջ 598;

<sup>86</sup> Հ. Վ. Գարենյան, նշված աշխատությունը, էջ 598;

<sup>87</sup> «Կամենից», էջ 199;

յալ հայերեն շատ նեղություն կրելով 1791-ին ի արդյամբք վախճանեցավ»<sup>88</sup>:

1775 թվականին Բուկովինան, հայաշատ Սուչավա քաղաքի հետ, երբ անցավ Ավատրիական կայսրության կազմում, ինչպես սուում է Հայությանը, Հովսեփի թ կայսրի առաջին հոգը եղավ Սուլդովայից այնտեղ եկած ոչ կաթոլիկ հայերին Տրանսիլվանիայի հայոց նման Հովոմի եկեղեցւուն միացնել, բայց նրա ևս ամեն ջանքերը իզուր անցան<sup>89</sup>: Այս նպատակով առաջինը ուղղուրվեց Քրիստափոր Քորպուկի հայ կաթոլիկ վարդապետը, որը Տրանսիլվանիայի հայերի հոգևոր հովիվն էր. նա 1782 թվականի մայիսի 10-ին հասավ Սուչավա և փորձեց հայերին կաթոլիկության մղել, սակայն նա ևս անհաջողության մատնվեց<sup>90</sup>: Ավատրիայի գեներալ էնցենքրդը աշխատեց աջակցել Քորպուկին, սակայն գեներալը Հովոմի համոզվելով այդ գործի վտանգավորության մասին՝ փոխեց իր միտքը<sup>91</sup>:

Ճիշտ է, որ այդ շրջանում Սուչավայում ճիզվիտների համար գործունեության ուժեղ հող կար, սակայն նրանք չեին կարող պետության բացարձակ օժանդակությունը վայելել, քանի որ պետական մարդիկ այժմ նպատակարմար էին գտնում Բուկովինան վեր ածել առևտրական խոշոր կենտրոնի և որտեղ հայերը կարող էին կարեռ դեր ստանձնել:

Այժմ Ավստրիայի մեծամեծները գտնում էին, որ կրոնական ճնշումները կիրտնեցնեն հայերին, և ինչպես գրում էր հետո գեներալ էնցենքրդը, այդ կարող էր նրանց արտագաղթի պատճառ դառնալ. այն ինչ դավանական կատարյալ ազատությունը հավանուեն «դրսի հայերին էլ կգրավի մեր երկրում...»<sup>92</sup>: Նման ազատության կողմ էր այժմ նույնիսկ Հովսեփի թ կայսրը, որը 1783 թվականին այցելել էր Սուչավայի հայերի մեծամեծներին և նույնիսկ ներկա էր եղել հայոց եկեղեցւում կատարված արարուղությանը<sup>93</sup>, Սուչավայի հայերը, պաշտպանվելու նպատակով, դիմում էին հաճախ էջմիածին, որին ի պատասխան Դուկաս կաթողիկոսի հանձնարությամբ այս գործով զբաղվեց Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփի արքեպիսկոպոս Արդուլյանը: Ղուկաս կաթողիկոսի մի շարք կոնդակների իբր հետեւանք,

<sup>88</sup> Վ. Վ. Բատկարյան, նշված աշխատությունը, էջ 383:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 386—387:

<sup>90</sup> Դեմ. Տան, նշված աշխատությունը, էջ 43:

<sup>91</sup> Լ. Բարյայն, «Հայերը Սուլդովայում և Բուկովինայում», Թիֆլիս, 1911, էջ 111:

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 110:

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 111:

Հովսեփ Բ կայսրը 1786 թվականին իր հրովարտակով իրավունք տվեց Բուլղարիայի հայագավան հայերին հպատակներու էջմիածնի կաթողիկոսին և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին<sup>94</sup>: Հովսեփ Բ-ի մահից հետո, հայերը դիմեցին նրա հաջորդ կեռպոլդ Բ-ին, սակայն հնարավոր չեղավ հայ հոգեոր առանորությունը վերահստատել:

Վերոհիշյալ բոլոր ժամանակաշրջանում և նրանից հետո էլ կաթողիկական քարողականությունը կանգ չէր առնում: 1796 թվականին Սուլավայի հայոց մոտ զրկվեց Հովսեփ Մոշորոյ հայ կաթողիկ վարդապետը<sup>95</sup>: 1824 թվականին Վիեննայից ուղարկվեց Քարաշոնի քահանան<sup>96</sup>: Ուշագրավն այն է, որ վերոհիշյալ երկու հոգեորականների անուններից դատելով, նրանք տրանսիլվանացի հայեր պետք է լինեին: Այս, վերոհիշյալ Հովհաննես Հակոբյան, Կորպուսի և Քարաշոնի տրանսիլվանացի քահանաների անունները ցույց են տալիս, որ այդ վայրի հայերի բռնի կաթողիկացումից հետո, կվովի թեմը երբեմն օգտագործում էր նաև տրանսիլվանացի հայերին, քանի որ նրանք Բուլղարիայի և Հատկապես Սուլավայի հայերի հետ սերտ ազգակցական կապեր ունենալով, հնարավոր էին համարում, որ իրենց քարողականությունը որոշ նպատակի կարող է հասնել:

Հստկարյանը գրում է, որ նույնպես առանց հետեւության են մնացել կվովի հայ արքեպիսկոպոս Ստեփանյանի «ջանքեր», որ Բուլղարիայի հայ կաթողիկ եկեղեցիները այցելելու ժամանակ, անձամբ «չմիացելոց դարձին սկսավ պարապիլ»<sup>97</sup>: Հիշյալը կվովի Սամվել Ստեփանովիլ հայ կաթողիկ արքեպիսկոպոսն էր (1831—1858)<sup>98</sup>: Այս վերջինը իրականում երկու անգամ եկել էր Սուլավա-

և հաճախակի քարողություններ կատարել և նույնիսկ վիճել էր տեղի հայոց ժողովրդապետական եկեղեցում, Հովհաննես Բողուշան անունով հայ քահանայի հետ: Ինչպես գրում է Դանը, հիշյալ հայ «քահանային անոր (իմա՞ Ստեփանովիլի)» այս միացնելու փորձին համար՝ հրապարակավ անեծք կարդաց անոր վրա»<sup>99</sup>:

Լեհահայ գիտնական թարոնը գրում է, որ 1828 թվականին, Ավստրիայի կայսրի հրամանով, Վիեննայից Պողոս վարդապետ Հովհաննայինը դրկվեց Սուլավայ, որը ևս տեղի հայերին հայերն լեզվով հորդորում էր միանալ, սակայն արդյունքի շասավ<sup>100</sup>:

Դարձյալ անարդյունք մնացին Ֆլորիան Միտուլսթի 1839 թվականին և ավելի ուշ հսակովիչի, իգնատիոս Ստեփանովիլի և Դավիթովիչի քարողական փորձերը<sup>101</sup>: Ժթ դարի վերջին էր, որ կվովի հայ կաթողիկ թեմի արքեպիսկոպոս իսակ հսակովիլը Սուլավայի և Բուլղարիայի «մոլորակ» ազգակիցներին միության հրավեր է կարդում<sup>102</sup>: Մեր դարի սկզբներին ևս հայ հովմեական մի եպիսկոպոս Սուլավայ է գալիս հայերին կաթողիկացնելու նպատակով, սակայն նրան ևս չի հաջողվում ոչինչ անել<sup>103</sup>:

Այսպիսով, դարերի պատմություն ունեցող կաթողիկական քարողությունը Սուլտանայի հայերի մոտ հաջողություն չունեցավ, քանի որ համառորեն կրկնվող առաքելությունները մեկը մյուսի հետեւից փշրվեցին ավանդապահ հայերի անհողողող և աննկում կամքին և նրանց հայրենասիրական հակագեցությանը բախվելով:

#### (Շարունակելի)

<sup>94</sup> Դմ. Տան, նշված աշխատությունը, էջ 127:

<sup>95</sup> Դմ. Տան, նշված աշխատությունը, էջ 43—44:

<sup>96</sup> Վ. Բատկարյան, նշված աշխատությունը, էջ 387:

<sup>97</sup> Խուլին տեղում, էջ 387:

<sup>98</sup> Հ. Ալիշան, «Կամենից», էջ 6:

<sup>100</sup> Sadok Baracz, նշված աշխատությունը, էջ 171—172:

<sup>101</sup> Դմ. Տան, նշված աշխատությունը, էջ 44:

<sup>102</sup> «Արմենիա», Մարտի, 1896, Ժթ տարի, № 34:

<sup>103</sup> Գ. Ուրունյան, «Պուրովինայի հայերը», «Բիւզանդիան», 1910, № 149: